ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 22 >> հունվարի 20 19 թվականի N 1 – Ա

## ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019թ. ՀՈՒՆՎԱՐԻ 22-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով Դեբետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դեբետ համայնքի ավագանու 2019թ.-ի հունվարի 22-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1.Դեբետ համայնքի 2019թ. փոփոխված բյուջեն հաստատելու մասին:
2. Դեբետ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ վաճառքով օտարելու մասին:
3. Դեբետ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տալու մասին:
4. ՀՀ Լոռու մարզի Դեբետ գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող սեփականության իրավունքով Հայաստանի մանուկներ հիմնադրամին պատկանող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ /3/ Դեմ /0/ Ձեռնպահ/0/

Անդրանիկ Պապինյան

Նաիրա Հարությունյան

Զավեն Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

20 19 թ. ________________ _____

գ. ______________

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք , գ.Դեբետ , 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 22 >> հունվարի 20 18 թվականի N 2 – Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓՈՓՈԽՎԱԾ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ մասով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Դեբետ համայնքի 2019 թվականի փոփոխված բյուջեն:

Կողմ /3/ Դեմ / / Ձեռնպահ/ /

Անդրանիկ Պապինյան

Նաիրա Հարությունյան

Զավեն Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

20 19 թ. ________________ ____

գ. ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 22 >> հունվարի 20 19 թվականի N 3 – Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

*1.Տալ համաձայնություն Դեբետ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերից* 06-034-0131- 0017 ծածկագրի տակ գտնվող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողատեսքից 0,06287հա հողակտորը *, մեկնարկային գինը 60355 ՀՀ դրամ,* 06-034-0131- 0016 ծածկագրի տակ գտնվող գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայրերի գործառնական նշանակության հողատեսքից 0,19094հա հողակտորը *, մեկնարկային գինը 253950 ՀՀ դրամ,* 06-034-0017-0010 ծածկագրի տակ գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողատեսքից 2030 քառ. մ հողակտորը *մեկնարկային գինը 121800 աճուրդ վաճառքով օտարելուն:*

*2. Լոտի մասնակցության վճարը 2000 ՀՀ դրամ, նախավճարի և նվազագույն քայլի չափը մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:*

*3.Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել աճուրդ վաճառքով օտարվող հողամասի հայտարարության հրապարակային ծանուցումը:*

Կողմ /3/ Դեմ / / Ձեռնպահ/ /

Անդրանիկ Պապինյան

Նաիրա Հարությունյան

Զավեն Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

20 19 թ. ________________ _____

գ. ______________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 22 >> հունվարի 20 19 թվականի N 4 – Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 31 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 10---Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Դեբետ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակչի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակչին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ /3/ Դեմ / / Ձեռնպահ/ /

Անդրանիկ Պապինյան

Նաիրա Հարությունյան

Զավեն Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

20 19 թ. ________________ _____

գ. ______________

**Հավելված**
**ՀՀ Լոռու մարզի**
**Դեբետ համայնքի ավագանու**
**2019 թվականի հունվարի 22--ի N 4-Ա որոշման**

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Մացակյան Անահիտ 20 000 /քսան հազար/ դրամ,
( Անուն, ազգանուն,հայրանուն)

ԸՆԴԱՄԵՆԸ՝ քսան հազար դրամ:

ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ (ստորագրություն) Աշոտ Ղազարյան
(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6 - 8 0 - 55

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 22 >> հունվարի 20 19 թվականի N 5 – Ա

## ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ և ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՏԻՄ օրենքի 18-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի<<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918- Ն որոշմամբ սահմանված կարգով, հաշվի առնելով << Հայաստանի մանուկներ>> հիմնադրամի գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանի դիմումը, Դեբետ համայնքի ավագանին որոշում է.

1.Հավանություն տալ ՀՀ Լոռու մարզի Դեբետ գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող սեփականության իրավունքով Հայաստանի մանուկներ հիմնադրամին պատկանող 06-034-0102-0004 ծածկագրով 0.435հա խոտհարքի, 06-034-0114-0002 ծածկագրով 0.727 հա վարելահողի, 06-034-0114-0028ծածկագրով 0.59409 հա խոտհարքի նպատակային նշանակությունը <<Սմարթ կենտրոն>> կրթական համալիր կառուցելու նպատակով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոխադրելու առաջարկությանը:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քննարկմանը:

Կողմ /3 /     Դեմ / /     Ձեռնպահ/ /

Անդրանիկ Պապինյան

Նաիրա Հարությունյան

Զավեն Խաչատրյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

20 19 թ. ________________ _____

Գ. ______________